ուղարկել Երևան, թղթատար ներկայ լինելու համար։

→ Ա. Զիմերկիլիից ստացած հեռագրի համաձայն՝ այս շաբաթ սպասվում է Վրաստանի անկախության ճանաչումը դաշնակիցների կողմից։

→ Վրաստանի կառավարության օրգան «Սաքարթվելու Ռեսպուբլիկա»-ի երեկվայ համարում կարդում ենք. «Սիսիանի և Աֆսրլյայի դաշտերի անկախությունը գեներալ-նահանգապետ Դ. Մայոշուիլին ներկայացրեց ներքին գործերի նախարարին Բակուրիանի շրջանում ապրող տասը գիլզի բնակիչների համախոհությունը, որոնք միջնորդություն են խնդրում, որ իրենց թույլատրի Վրաստանի հպատակություն ընդունելու։»

→ Վրաստանի երկաթուղային ծառայողներին և բանտարկյալներին ուղարկված անկախության թերթերն մեծամասնությունը թաքնական պատասխան է ստել գործադուլ անելու հարցին։

→ Մի երկու օր առաջ տրամվայի պարկում և Վեռայի կամարջի տակից գտնվել է բաւական քանակությամբ ուժանակ։

→ Դրամական միջոցներ չլինելու, ընտրական և հպատակության օրենքների բացակայության պատճառով քաղաքային իրավասուների առաջիկայ աշխատանքներն արգելքի են հանդիպում։

→ Հրացան և 1000 փամփուշտ ուղարկելու համար ձերբակալել է Զուգաբաշվիլին։

→ Վերջին օրերս քաղաքում հացի գինն զգալի չափերով ընկել է. ոսպիտակ հացի գինը դարձավ 4—4 ռ. 50 կ., սեռնը՝ 3—3 ռ. 50 կ.։

→ Միլիցիոնների համար մշակվում է նոր հանգերգեստ։

→ Նոյեմբերի 18 և երեկ. ժամը 7-ին, Ռուսական փող. գտնվող մեծշնաշ ճաշարանի տան բանվել է մի սայլ բեռնած սատկած անասունների և նրանց որովայններով, որը ճաշարանատէր Ղազարան Ցիխիսերին բերելիս է եղել ճաշարանը։ Վերջինս ձերբակալել է։

✓ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

—

Երևան, Նոյեմբ. 9

Վրաց դեմոկրատական հանրապետության պատգամավորներ գործոց նախարարի պաշտոնակատար Ն. Ռամիշվիլին հոկտ. 27 թվակիր նամակով դիմել է Հայաստանի հանրապետության ու յիշելով համաշխարհային պատերազմի մոտալուտ վախճանը և Անդրկովկասի ու Նավթյան ժողովուրդների վերամիավորվելն համաշխարհային ներկայացուցչությունների հանդիպելու անհրաժեշտությունը, առաջարկում է Հայաստանի և Անդրկովկասի հանրապետությունների կառավարիչներին, այլ և Հիւսիսային Կովկասի լեռնցի ժողովուրդների դաշնակցությունն հաւաքել խորհրդաժողովի Թիֆլիսում նոյեմբ. 3-ին, ցերեկայ ժամը 12-ին, որպեսզի գործոց նախարարության բնակարանում (Նիստակայա, 9), ուղարկելով այդ խորհրդաժողովին երկուական ներկայացուցիչներ հանգամանքների օրինական լիազորությունով։

Առա այս առաջարկությունն էր, որ երկ քննության առարկայ դարձավ Հայաստանի Հանրապետության և արժանացավ կուսակցությունների կողմից հավանությունն հանիրաշխ գնահատության։

Առաջին խոսքը վերցրեց սոց.-դեմոկրատական ֆրակցիայի ներկայացուցիչ Ս. Մամիկոնյանը։ Ի զարմանս թէ պատգամավորների և թէ ժողովրդի՝ սոցիալ-դեմոկրատ հեռուորը տալիս է ճշգրիտ արձագանքություն սոց.-դեմոկրատ Ռամիշվիլի առաջարկությունն։ Նա իրավամբ հարցնում է վերջապես կառավարության առաջարկությունն անվանել ու անհամաձայնություն հայ ժողովրդի արժանապատվության։ Ընդունելով սկզբունքորեն Անդրկովկասյան դեմոկրատիաների միությունն պէտք է խորհրդաժողովի անհրաժեշտությունը, ս. դ.-ական ֆրակցիայի բանանվեր մերժում է այն խորհրդաժողովը, որ վրաց կառավարությունը ուզում է փոխանցել հայ ժողովրդի վրայ։ Սոց.-դեմոկրատական ֆրակցիան առաջարկում է կառավարությունն մերժել վրաց պատգամավորներին գործոց նախարարի առաջարկությունը և բանակցել նոր, ուրիշ պատասխան ու նպատակայարար մեջ կազմվելիք խորհրդաժողովի մասին։ Այդ խորհրդաժողովին պէտք է հրավիրվեն և Հիւսիսային Կովկասի ներկայացուցիչները։

Հ. Ց. Դաշնակցության կողմից խոսում է ընկ. Սամկ Թորոսեանը։ Նա կանգ է առնում գլխավորապես հարցի ձևական կողմի վրայ, գանում է անվայել վրաց կառավարության դիմումի այդ ձևը, որով միակողմանի կերպով նախարարում է խորհրդաժողովի կազմը, գումարման ժամանակն ու տեղը։ Ինչպես նաև ցնցիլեր հարցերի ցուցակը։ Տալով իր սկզբունքային համաձայնությունը խորհրդաժողովին հառաջանն առաջարկում է մերժել վրաց պատգամը գործոց նախարարի ներկայ դիմումը, բանակցության մտնել Վրաստանի կառավարության հետ հող պատրաստելու համար սպասելայ խորհրդաժողովի, համար որոշել նրա կազմը, օրակարգի հարցերը, և գումարման տեղը։ Ամենայն դեպքում նրանց ներկայացուցիչը գանում է նեռ, որ Վրաստանի և Հայաստանի սահմանների որոշման խնդիրը չպիտի ենթարկվի խորհրդաժողովի քննության և նախորդելու է վրաց և հայոց կառավարությունների միջև խորհրդաժողովի գումարումը։

Հարցն բա էության քննության են անցում անկուսակցական Ս. Մամիկոնյանը և սոց.-յեղափոխական Ս. Ռեդիկյանը։ Նա ասիրը գանում է ներկայ պայմաններում որև է խորհրդաժողով գնալու և առաջարկում է մերժել վրաց արտաքին գործոց նախարարի հրավերը։

Ա. Ռեդիկյանը վերցնելով վրաց դեմոկրատիայի զեկավարների կեղծավոր դիմումը և ցույց տալով, որ նրանք չեղել են դեմոկրատական ֆրոնտից ու դաւաճանել առաջական յեղափոխության ասանդներին՝ կարծում է, որ «չէ կարող և չպիտի լինի որևէ համաձայնություն պետությունների միջև», Վրաստանի ներկայ առաջարկությունը արդիւնք է այն բանի, որ Գերմանիայի պարտությամբ վրացի շովինիստները նեղն են ընկել և գանգատվում խորհրդաժողովներով ուզում են խաբել արտաքին աշխարհի հանրային կարծիքը։ Հոնորը մերժում է վրաց մենաբար առաջարկը խորհրդաժողովի գումարման մասին։

Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչը մեռնում է պատասխանում կարծիքներին և առաջարկում է ընդմիշտ ուել մի ընդհանուր բառաձև կացության համար։ Սակայն, չնայած, որ բոլոր կուսակցությունները էլ համարեա միանոյն տեսակետը յայտնեցին, բաւական երկարատև ընդմիջումը ոչ մի գրական հետևանքի չի հասցնում։ Ի վերջ ներկայացում է երեք բանաձև—Հ. Ց. Դաշնակցության, սոց.-դեմոկրատների և սոց. յեղափոխականների։ Դեռ քննության արվելիքը լինում է այն, որ սոց.-դեմոկրատները գանգատվում են 3 ձայն, սոց.-յեղափոխականները՝ 7 ձայն և դաշնակցականները՝ 26 ձայն։ Այսպիսով, ուրեմն, ձայնի մեծամասնությամբ անցնում է դաշնակցական ֆրակցիայի բանաձևը։

Այնքի առաջ ունենալով հարցի լուրջությունը և շահեկանությունը ոչ միայն Հայաստանի համար, այլ և հարևան հանրապետությունների մենք առաջ կը բերենք երեք բանաձևերն էլ։

Հ. Ց. Դաշնակցության բանաձևը.—«Հայաստանի Հանրապետությունը 1918 թ. նոյեմբերի 10-ին վրաց կառավարության նախաձեռնությամբ Թիֆլիսում գումարվելիք Անդրկովկասեան կոնֆերանսի մասին հղած գրությունները և լսելով այդ հարցի շուրջը ծագած վիճաբանությունները՝ սկզբունքով համաձայնում է Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցչական գումարելու առաջարկությունը, սակայն գանում է, որ այն նոյեմբերի 10-ին գումարել չի կարող. նախ՝ այն պատճառով, որ Վրաստանի կառավարությունը այդ խնդրի նախապատրաստական աշխատանքները հայկական հանրապետություններին վայել եղանակով չի տարել, ապա որովհետև հրավէր ուղ է ստացած, ուստի և Հայաստանի կառավարությունը հարկադրված է հող պատրաստել մասնակցելու կոնֆերանսին՝ նախօրոք համաձայնության գալով կոնֆերանսի կազմի, օրակարգի տեղի և ժամանակի նկատմամբ։ Մինչև ժամանակ Հայաստանի Հանրապետությունը գանում է, որ Հայաստանի ու Վրաստանի սահմանորոշման հարցը առանձնաբերեն չպիտի ենթակայ Անդրկովկասեան կոնֆերանսի հետ, այլ պիտի վճռվի մեկուս. երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ և նախքան Անդրկովկասեան կոնֆերանսի գումարումը»։

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի բանանվեր.—«Լսելով վրաց դեմոկրատական հանրապետության գրությունը հոկտեմբերի 2-ից 1918 թ. Հայաստանի հանրապետության զեկանագրական ներկայացուցչի անունով Վրաստանի, որով հրաբերում է նոյեմբերի 10-ին Թիֆլիսում Անդրկովկասի, Վրաստանի, Հայաստանի և Հիւսիսային Կովկասի լեռնցիների դաշնակցության կոնֆերանսի մասին Հայաստանի Հանրապետությունը գանում է, որ

1. Ի նկատի առնելով, որ համաշխարհային պատերազմը մոտենում է իր վախճանին և որ հայաստանի ընդարձակ վիճաղեղությունը պէտք է որոշի նաև Կովկասի և Անդրկովկասի ապագի հանգամանքները. այդ ժողովուրդների միասնական ուսում գալու համար վնասաղեղությամբ անհրաժեշտ է, որ նրանք որոշ համաձայնության գային և վարքագիծ հաստատեին իրար մէջ որոշ փոխադարձությունների։

2. Այդ նպատակով անհրաժեշտ է հրավիրել կոնֆերանս, որտեղ պիտի ներկայանան Կովկասի և Անդրկովկասի այն բոլոր պետական նորաստեղծ մարմինները, որոնք բաժանվել են ռուսական կայսրությունից։

3. Կոնֆերանսի կազմը, նրա գումարման տեղն ու ժամանակը, ինչպես նաև այն խնդիրները, որոնք ենթակայ են լինելու կոնֆերանսի քննությանը, պէտք է մշակվեն և որոշվեն ոչ թէ միակողմանի եղանակով, այլ միայն մասերի նախընթաց փոխանակությունից յետոյ այն ժողովուրդների կառավարությունների մէջ, որոնք մասնակցելու են կոնֆերանսին, ապա նոր միայն գումարվի կոնֆերանսը։

Հայաստանի Հանրապետության կառավարության յանձնել, որ նա չբաժանվելով նոյեմբերի 10-ին հրավիրող կոնֆերանսին ամենայնիվ ընկի բանակցություններ վարելու վրաց դեմոկրատական հանրապետության կառավարության հետ միջազգային յանձնաժողով գումարելու կոնֆերանսի հրավիրման համար, յանձնի նրա քննության կոնֆերանսի կազմի, գումարման ժամանակի, տեղի և օրակարգի հարցերը։»

Սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիայի բանանվեր. — «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի հրաւիրած կոնֆերանսի օրակարգից երևում է, որ այդ միջազգային կոնֆերանսը հաւաքում է միայն միայն մի գլխաւոր նպատակով՝ ամրապնդելու Անդրկովկասեան զանազան հանրապետությունների ներքին իրական և արտաքին միջազգային դրությունը, Հայաստանի Հանրապետությունը հրաժարում է մասնակցել այդ կոնֆերանսին և միաժամանակ առաջարկում է հայ մտքերական ասմանների խնդիրը լուծել այդ երկու ազգությունների ներկայացուցիչների ժողովում։»

Ս. Մասարեաց

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Երևան, Նոյեմբ. 8.

— Ներկայացուցիչներ եկան Վրաստանի և Լիհստանի կողմից։ Վրաստանի մերթալի պետն է Մդիւանին։

— Գերմանական միրքեր հեռացա Հայաստանից՝ լիկվիդացիան ենթարկելով իր բոլոր գործերը։

— Վերջին օրերը Թիֆլիսից եկած Հայաստանի յատուկ դեսպանը բանակցությունների է ենթարկել վրաց իշխանությունների կողմից։ Նախկին դեսպանը խուզարկության է ենթարկվել մի միլիցիայի կողմից, և գնացրած գրանած առա սպասերը վայր են գցված։ Նեանդան դիմումներից ու մի քանի միջնորդներից յետոյ գնացքը ազատ է թողնվել։

Նոյն գնացքը Սանահնում ենթարկվել է ուրիշ ծանր անպատասխանության։ Գնացքի ընդհանուր խուզարկությունը բոլոր սպաների ձեռքից խլել են ատրճանակները և տեղն ու տեղը բանանվել վրաց սպաներին։ Վրացի զինվորները մերթերներ են ստացել և թույլ չեն տալ, որ հայկական գնացքը առաջ շարժվի։ Գնացքից բանանվել են 3 կիլան վարդ ապրանքներ և վերադարձել Թիֆլիս։ Գնացքում գտնվող ճանապարհների հասցեին նեռաել են վիրաբարական խաչեր վերջ իշխանությունների այս ձևի վերաբերումը զարմանան և զայրույթի բուռն զգացում առաջ բերեց Երևանում։ Այդ առթիւ Հարդրդարանում հարցում է ուղղված արտաքին գործոց նախարարությանն։

—

Երևան, Նոյեմբ. 10.

Ցրտերը սկսել են սասականալ։ Գեղջկանների գրությունն անհանգստացնելի է դարձել։ Ուղղակի սխրանքի կոստրած է տեղի ունենում։ Հենց այս վիշտը միայն երևանում 17 գաղթական է մեռել։ Էջմիածնում մեռել են 70 հոգու։ Ուրշ կողմերում կայարանին ասելի վատ է։

Ցրտին ուտելանում են սոնն ու հիանդությունները։ Ուժեղանում է բզբաբար տիզը։ Գաղթականները ձանրում են իրենց վիշտն շալակած՝ մի կերպ չոր հաց ձարելու համար։

Այսքը առաջանալից սկսած քաղաքային պարտեզում տեղի են ունենում գաղթականական միտինգներ ժողովրդը մի բեռ է պահանջում։ Դիմումները եղան Հարդրդարանին, կառավարությանն, որոնք սակայն, անգոր են իրական գործոն տալու, ասելիկ զորքերը շարունակում են մեռ գրաւուած վայրերում և թույլ չեն առնում հայերին վերադառնալ իրենց տները։

Հ. Ց. Դաշնակցական ֆրակցիայի նախաձեռնությամբ Հարդրդարանական բոլոր ֆրակցիաները դիմեցին կառավարությանն՝ պահանջելով անմիջապես փակել զորքերը և տեղատուել զուրսը մեռած գաղթականներին։

Դաշնակցական ֆրակցիայի մէջ տրամադրությունն կայ առաջարկելու, որ մի առժամանակ փակի Հայաստանի Հարդրդարանը, և պատգամավորները երթան ժողովրդի մէջ նրան օգնություն հասցնելու համար։

Տաճիկ զինուորական իշխանությունը որոշ հաւատ, յատուկ ծրագրով շարունակում է կոտորել հայերին։ Մթթէ դաշնակից պետությունները էլ Գերմանիայի պես, պիտի թույլ տան, որ տասիկն իր ոճրագործությունն անպատիժ առաջ տանի։ Մթթէ նրանք թույլ պիտի տան, որ Հայաստանը յոչնչանա։

Ս. Մ.

ԵՐԵՎԱՆԻՑ

—

Ստացած տեղեկությունների համաձայն՝ Գարբուստանից, Նախիջևանից ու Շարուրից բաւականաչափ տաճիկ զորքեր եկել կուսակիցներ են Ղամարլուի և Ուլուխանլուի շրջանները։ Այդ տեղերը համարում են մեր գյուղերի կենտրոններ։ Այս տարաշ հացի բերքը անասելի էր։ Եկել է նաև խոպոտի մեծ